# Համաձայնագիր N Ռ46_2018

ք. Երևան 07.02.2019

Սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) թվագրված 2019 թվականի փետրվարի 7-ին, ստորագրվել է մի կողմից «ԱՅ ԷՍ ԷՍ ԴԻ» Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ» Հասարակական Կազմակերպության (այսուհետ՝ Կատարող), ի դեմս ընկերության նախագահ Մխիթար Ավետիսյանի և «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գործընկեր), ի դեմս տնօրեն Աշոտ Բլեյանի, մյուս կողմից առ այն, որ «ԱՅ ԷՍ ԷՍ ԴԻ» ՀԿ-ի կողմից իրականացվող «Recycle it» ծրագրի շրջանակներում՝ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ում տեղադրվել է 16 հատ ստվարաթղթե սորտավորման ամաններ նախատեսված պլաստիկ շշերի և թղթի թափոնների համար:

Կատարողը բարեգործական հիմունքներով տրամադրում է ամանները գործընկեր կազմակերպությանը: Գործընկերն իր հերթին պարտավորվում է հետևել, որ ամաններն օգտագործվեն պատշաճ կերպով: Անփույթ վերաբերմունքի պատճառով ամանին հասցված վնասի դեպքում Գործընկերը պարտավորվում է փոխհատուցել վնասված ամանի գումարը, որը կազմում է 4 000 ՀՀ դրամ, յուրաքանչյուր ամանի համար: Գործընկերը պարտավորվում է իր մոտ պահեստավորել սորտավորված թափոնները, և տեղափոխել վերամշակման կայան,ինչպես նաև տրամադրում է կատարողին ամսեկան հաշվետվություն վերամշակման ուղարկված թափոնների քանակի վերաբերյալ: Կատարողը կարող է Գործընկերոջ մասին տեղեկատվություն տեղադրել իր կայքում և սոցիալական ցանցերում, ինչպես նաև գովազդային այլ նյութերում: Գործընկերոջ ցանկությամբ, Կատարողը կարող է անցկացնել նաև մեկ անվճար բնապահպանական դասընթաց աշակերտների համար:

Համաձայնագիրը գործում է անժամկետ, այն կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

«ԱՅ ԷՍ ԷՍ ԴԻ» Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ» հասարակական կազմակերպություն

Հասցե՝ Իսահակյան փ., տ 15, Երվանդաշատ 1005, ՀՀ

ՀՎՀՀ՝ 04425982

ԻՆԵԿՈ Բանկ, հ/հ 2050522030361001

_______________________

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ

Հասցե՝ ՀՀ, Երևան, Րաֆֆի 57

_______________________